ձեռնարկությանը մեծ. տիկին Ակիմանցը, նպաստելով ոչ միայն կենցերտի նիւթական ապողովությանը, այլ և հրաւիրելով պրոֆեսոր-երաժիշտներ, որպէս և ամենայն դէպքում ապիսատելով պակասացնելով կենցերտի ծախսերը։ Նոյնպէս յիշելու է մեծ. տիկին Ակիմանցի քոյր՝ տիկին Էջիվլերը, որ ջերմ համակրանք ցոյց տուեց այս գործին, մինչև անգամ մասնակցելով երաժշտական երեկոյին և փանալի կերպով երգելով Գունոի «au printemps» ռոմանսը։ Որպէս և մի քանի այլ բաւական երգեր։

Բացի այս երկու հայուհիներից՝ յիշելու է ռուս իշխանուհի Գուլովան, որ կարելի է ասել կենցերտի հերոսուհին էր (պիանիստկա)։ Նա չատ գեղեցիկ կատարեց Շոպէնի As-dur բալլադան և Մենդէլսոնի D-moll տրիօն (գիտաս, ջուրակ և վիոլոնչէլ)։ բայց հիանալի էր Հիլդեբրանդեր օպէրայից ֆանտազիան—այդ դժուարին գործը, որտեղ նա ցոյց տուեց մի զարմանալի նարպիկութիւն և վարժութիւն իր ձեռքերի ու մատների, խորին երաժշտական հմտութիւն և կիրթ ճաշակ։—Մենք հաչելու չատ չնորհակալ պիտի լինենք մեծ. իշխանուհուց, որպէս և երգչուհի օրիորդ Ցվէնկովայից և միւս երաժիշտներից, որոնք՝ իրրև օտարազգիք համակրեցին յոգուտ սովատանջ վանեցոց տուած երեկոյին և ոչինչ չը խնայեցին իրանց կողմից որքան կարելի է վայելուչ, գեղեցիկ և փառաւոր դուրս բերել կենցերտը—առանց որ և է նիւթական վարձատրութեան կամ պարգևի։ Անկարելի է մոռանալ պ. Բաուէրին, որ մեծ բաւականութիւն պատճառեց հասարակութեան իր փանալի ցիտրայով։

Լ. Եմեմարանի աշակերտները երկու անգամ երգեցին «Էջոր եկաք մանուքս» երգը և կենցերտի վերջում «Боже Царя храни»—պ. Ստեփանոսի առաջնորդութեամբ։

Կենցերտին մասնակցող երեք տիկնայքն էլ բատացան մի մի փառաւոր փունջ՝ իրրև ընծայ մի պատուելի ընտանեկից։

Հանդիսականների թիւը սատիկ չատ էր. մի գատարկ աթոռ չը կար մեծ դահլիճում. բոլորեքեան՝ առանց բացառութեան, մնացին մինչև կենցերտի վերջը։

Վերջացնելով մեր խօսքը և կրկին անգամ չը նորոգակալութիւն յայտնելով թէ կենցերտին մասնակցողներին և թէ այդ կենցերտի կազմակերպչական նպաստողներին, կարող չենք նորոգակալութիւն չը յայտնել և Լ. Եմեմարանի մեծ. պ. պ. վերաբերչին և տեսչին, որոնք ուրախութեամբ ընդունեցին հայ հասարակութիւնը իրանց դասիներում և ոչինչ նիւթական ծախսեր չը խնայեցին որքան կարելի է չքեղ, փառաւոր և բարեզարդ անել երաժշտական երեկոն։

Կենցերտի եկամուտը մերձաւորապէս 1100 ռուբլ էր. իսկ զուտ օգուտը 800-ից աւելի պէտք է լինի։

Բացի սրանից այստեղի հանգանակութիւնը յոգուտ վանեցոց դեռ չարունակվում է. հաւաքվել է մինչև այսօր 7000-ից աւելի. 6000-ը արդէն ուղարկված է ուր հարկն է։

Այս օրերս կուղարկեմ ձեզ մօտ 100 ռ. որ ժողովել ենք յոգուտ սովատանջների հայ ուսանողների մէջ։

Բ.

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻՑ

—

Մարտի 27-ին

Այսպէս երիտասարդներից և տիկիններից ոմանք չը կարողացան անտարբեր զանվել դէպի ազգայնասիրեան սուրբ պարտքը՝ և ժողովեցին այս չնչին գումարը որը պէտք է ընդունեն մեր վանեցի եղբայրները և քոյրերը ոչ որպէս օժանդակութեան միջոց, այլ որպէս համակրութեան նշան։ Սրանք են նուիրատուները. Գ. պ. Մելիք-Շահնազարեանց, Մելիքեանց, Բարխանեանց իւրաքանչիւրը 5-ական ռուբլի, պ. Տէր-Սահակեանց, տիկին Սուքիասեանց, պ. Գրիգորեանց, պ. Սարուխանովգեանց, պ. Ազամեանց, պ. Օրդուխանեանց, պ. Ս. Մանասեան-Ղարամանեանց, պ. Մելիք-Մուրադեանց, իւրաքանչիւրը 3-ական ռուբլի։ Տէր-Միքոռիչ Շխմանեանցի, պ. Բարսեանց, Տէր-Ազամեանց, Օրբելի, Ազամիրզեանց, Համարձումեանց, Թունեանց, Դաւիթբէկեանց, Արզարեանց, իւրաքանչիւրը 2-ական ռուբլի։ Տիկին Ռաֆայէլեանց, տիկ. Տէր-Միքայելեանց, պ. պ. Գոլովաչեանց, Մելիք-Գեորգեանց, Աւագբեկեանց, Մասումեանց, Բաղչանց, Խաչատուրեանց, Վարդապետեանց, Աւէտիքեանց, Մանուկեանց, Տէր-Միքայելեանց, Օնանեանց, Տէր-Խաչատեանց, Յովհաննիսեանց, Ֆրանգիլեանց իւրաքանչիւրը 1 ռուբլի։ Ս. Ֆրանգիլեանցը վճարեց փոստայի ծախքը։ Ընդամենը 75 ռուբլի։ Որը ուղարկելով խմբագրութեանդ, խնդրում ենք հաւաքեցնել ուր հարկն է։

Ա.

ՆԱՄԱԿ ԻԳԴԻՐԻՑ

—

17-ին մարտի

Տեղիս հասարակութիւնը զգալով վանայ սովատանջների այժմեան սարսափելի դրութիւնը, որոնք օրեցօր պարենի համար տանջվում են, ուստի հաւաքեցաւ. հետեւել յանձնէ յանձնէ գրված անձերից՝ ի նպաստ նոյն սովելոցն 153 ռուբլ 15 կոպ., ոչ թե. Սարգիս Ա. քահանայ Մանուկեանց 10 ռ., Աղաման Կանայանց 50 ռ., Սամուէլ քահանայ Սողոմոնեանց 10 ռ., Մարտիրոս Միրզոյեանց 2 ռ., Յարութիւն Պարիսեանց 2 ռ., Պետրոս Հարապետեան 4 ռ.. Նազար Պետրոսեան 1 ռ., Յովհաննէս Յարութիւնեան 1 ռ., Յովհաննէս Կանայանց 1 ռ., Սարգիս Մ. Նազարեանց 1 ռ., Սահակ Ասլանեանց 40 կ., Գասպար Արզումանեանց 1 ռ., Թոմաս Աւագեանց 1 ռ., Փոքրոս Բարսեղեան 2 ռ., Ներսէսեան Տէր-Միհասեան 40 կ., Մկրտիչ Սարգսեան 1 ռ., Մինաս Մ. Աւլավերդեանց 3 ռ., Յարութիւն Գէր-Յարութիւնեանց 1 ռ., Աէքսան Մինասեան 1 ռ., Բազդասար Մ. Յովհաննէսեան 1 ռ., Յակոբ Մ. Նիսանեան 1 ռ., Ասկան Մուրադեան 60 կ., Մկրտիչ Թարսյեան 25 կ., Յակոբ Զորանեանց 2 ռ., Խաչատուր Յովհաննէսեանց 2 ռ., Նաւս Վարդանեան 50 կ., Աէքսանդր Աստարէկեանց 1 ռ., Մովսէս Տէր-Աբրահամեանց 1 ռ., Նիկողայոս Վարդիկեանց 1 ռ., Մովսէս Աւետիսեանց 1 ռ., Գրիգոր Սարգսեան 2 ռ., Աղազար Ներսէսեան 4 ռ., Կարապետ Յովհաննէսեանց 1 ռ., Սարգիս Յովսէփեան 3 ռ., Տիրուհի Շեղոկով Մանուկեան 5 ռ., Սահակ Կանայանց 2 ռ., Գասպար Յովհաննէսեան Ղազարեանց 2 ռ., Մովսէս Բէկ Տէր-Սարգսեանց 10 ռ., Բարգուշիմեան Տէր-Ստեփանոսեանց 3 ռ., Մամիկոն Մէլիք-Մնացականեանց 1 ռ., Մանուկ Յարութիւնեանց 2 ռ., Յակոբ Սարկ. Ջալալեանց 2 ռ.։ Վիճարկութիւնից 10 ռ., և խնդրունք հաւաքել ուր հարկն է։

Աղաման Կանայանց

ՆԱՄԱԿ ԿԱՂԶՄԱՆԻՑ

—

Մարտի 18-ին

Ձեր «Մշակ» լրագրի համարներ կարդալով վանայ սովելոց հայ եղբարց վիճակը մեծ ազդեցութիւն ունեցաւ մեզ վրա, վասն որոյ հանգանակելով մեր ընակված քաղաքի օտարական վանաձաղկանոներից, կարողացանք հաւաքել յոգուտ սովատանջների հարիւր տասն և հինգ ռուբլի (115 ռ.) որը և ուղարկում եմ ձեզ։

Նուիրող անձինք Հին-Նախիջեւանցիք։ Զաքար Մ. Ջանփոլադեանց 10 ռ., Յովհաննէս Ջանփոլադեանց 10 ռ., Կարապետ Ջանփոլադեանց 5 ռ., Աւետիք Ջանփոլադեանց 6 ռ., Նիկոլայ Շանմուրադեանց 5 ռ., Եսայի Բ. Ջանփոլադեանց 10 ռ., Ջալալ-Օղլիցիք. Նէրսէս և Մնակ Դումիամբեանք 20 ռ., Մացակ Գ. Մնակով 10 ռ., Աէքսանդրօպոլցիք. Վաղարշակ Բալասանեանց 5 ռ., Գէորգ Բարայեանց 2 ռ., Արշակ Բիլբարեանց 2 ռ., Աբուլիսցի. Մէլքոն Մկրտումով 3 ռ., Զարսցիք Աղէքսանդր Մոգզարեան 5 ռ., Աղանին Նահապետեան 3 ռ., Աղաման Տէր-Պողոսեան 1 ռ., Բիթլիսցիք. Մէլքէ Տէր-Յովհաննէսով 10 ռ., Յովսէփ Դանիլով 3 ռ., Խոյիկ Մ. Յակոբեան 1 ռ., Պետրոս Խէնտէրեան 1 ռ., Ոմն 1 ռ., Զաքար Հայրապետով 1 ռ., Պօղոս Մ. Վարդանով 1 ռ., Ընդամէն գումարը եղաւ հարիւր տասը և հինգ ռուբլի (115 ռ.)

Եսայի Բ. Ջանփոլադեանց

ՆԱՄԱԿ Վ.ԼԱԴԻԿԱՎԿԱՍԻՑ

—

29 մարտի

Առաջին նամակս հետ ուղարկելով ձեզ 401 ռ. յոգուտ վանայ զաւառի սովելոց, ի միջի այլոց խոստացել էի մեր երկու քաղաքից դիմաւորութիւնը. հուրիատուութիւնը չարունակելու դիմաւորութիւնը, բայց չը գիտեմ խմբագրութիւնդ ինչ պատճառով այդ պարբերութիւնը բաց էր թողել։ Մենք չը փնտռվեցանք և մեր խոստումն իրագործեցինք։ Ամեն կիրակի եկեղեցու բեմից հերթով տանենաքանելով յոգեղորում ենք մեր բարեպաշտ ժողովրդից, առատաձեռնութեամբ ձգել իրանց լումայն, ազգային գանձանակի մէջ, գոյացած գումարն հասցնելով 100 ռ. երկկ հեռագրով փոխադրեցինք Թիֆլիս, խնդրելով պ. Զիմախանցին այդ գումարը հասցնել ձեր խմբագրութիւնը, որը յուսով ենք ստացած կը լինէք և անօրինած վասպուրականի թշուառ հայերին հասցնելու. վասնզի խնդրում այս հաճառոտ նամակիս հետ հրատարակէք նուիրատուաց հետեւել անունները՝ ի նրանոյս այլոց։

Սարգիս Մարկոսեան կիրակոսեանց 25 ռ., կին սորա տիկին Նունիա 5 ռ., Մայր սորա Նազանի 5 ռ., Անդրեաս Զաչատեանց 1 ռ., Բազարատ Վախտանգեանց (երկրորդ անգամ) 3 ռ., Նազարէթ Վէրիլեանց 5 ռ., Գրիգոր Բաղդասարեանց 3 ռ., Գրիգոր Վարդանեանց 2 ռ., Բաղդան Փիրալեանց 2 ռ., Աստուածատուր Սուխիեանց 1 ռ., Սեւանով 1 ռ., Աէրէ Միրզոյեանց 1 ռ.. Գէորգ Պետրոսեանց (կրկին) 5 ռ., Յակոբ Մկրտչեանց 1 ռ., Գէորգ Սումիեանց 1 ռ., Տիկին Նատալիա Զալինեանց 3 ռ., Տ. Վահ. Շողեանց 2 ռ., Տ. Մարթայ Եղիկեանց 8 ռ., Տ. Կատարինէ Բաղդասարեանց 5 ռ., Տիկ. որդի սորա 5 ռ., Տ. Մարգարիտ Յովսիփեանց 1 ռ., Հայուհի ոմն 1 ռ., Տ. Եղիսաբէթ Խումարեանց 1 ռ., Տ. Յուլիանէ Խումարեանց 1 ռ., Տ. Մարիամ Խիթարեանց 2 ռ., Այրի Մարիամ Թովմաեանց 1 ռ., Տ. Աննա Պանպալեանց 2 ռ., Այրի Ուստիանէ Սերեբրաեանց 1 ռ., Այրի Սոփիա Մարտի Մարուքիովի 3 ռ. (յոյն)։ Յարութիւն և Ստեփաննոս (երկուորեակք) Եղիկեանց 1 ռ., Գէորգ Բասենանց 1 ռ., Տ. Աննա Միրզաբէգեանց 2 ռ.։ Ընդամենը 101 ռ. հեռագրի 50 կոպէկ հանելով, մնում է ինձ մօտ 50 կոպէկ։ Ստորագրութիւնը կը չարունակվի մինչև Զատիկ։

Մինաս ք. Միրզաեանց

ՆԱՄԱԿ ԱՂԴԱՆԻՑ

—

23 մարտի

Այսօր բարոյապէս և ֆիզիքապէս յոգնած հասանք Աղդաշ, որ գտնվում է Գանձակի և Շամախու ճանապարհի վրա։ Գաղթած ոսկրներս անդադար ճանապարհորդելուց յետոյ Աղդաշի իջեւանում կարգի բերելու վիճակվեցաւ։ Օգուտ քաղելով նորանից, որ փոստի ճանապարհի վրա ենք գտնվում, սկսեցի բարեկամներից մէկին նամակ գրել։ Մոմը ցուրտ և ծխում սենեակումս մի աղտոտ լոյս էր գցում նամակիս վրա։ Աչքերս մի կողմ դարձած միտք էի որոնում գրչիս նիւթ, յանկարծ ելակվեցաւ լրագրի թերթը աչքովս ընկաւ, ազատութեամբ էր, թէ ուրախութեամբ վերցրի, դա մարտի 16-ի կիրակէի 74 № էր։ Լրագրի էջերի վրա ընդհանուր ակնարկութիւն գցելով, աչքովս ընկաւ «Մշակ» խօսքը։ Այդ բաւական էր որ ոչ ես աչքս չը դարձնէի այդ չարքերից։ կարդացի հետեւեալը՝ «Մշակին» առաջնորդող յոգուածի մէջ մարտի 15-ին կարդում ենք հետեւեալը՝ «Մեզ հաղորդեցին տպելու համար հետեւեալ տխուր հեռագիրը, որ ուղարկել է Վանի ռուսաց հիւպատոս պ. Կամարականը. սովը մեծ ուժով տարածվում է. Աղդակումը մինչև 150 մարդ սովամահ են եղել. հարիւրաւոր գիւղացի աղջիկներ, մերկ և սոված վերթափած են գիւղի փողոցներում. վանի մէջ կայ 200—300 երեխայ սովից հիւանդացած. Խրիմեան Հայրիկը ձեռք է տուել հիւանդանոց հիմնելու։ Օգնեցէք այդ մարդասիրական ձեռնարկութեանը։ Եթէ գործ չը դրվին ամենաանհրաժեշտ միջոցներ, վասպուրականը կորած կարելի է համարել։ Մեծ գումարներ միայն կարող են հեռացնել նորա վերջնական կորուստը։

Վերի բարոյապէս յոգեներս վրա խօսեցի, մի երկու խօսքով պարզում խօսքս, այն բժիշկների մէջ, որոնք նշանակված են քննելու Բաքուի նահանգի առողջապահական գրութիւնը, ինձ և միայն իմ ընկերոջը վիճակվեցաւ երեք հարի գիւղ Բաքուի սահմանումը Գանձակի նահանգի մէջ։

Միւս բժիշկների քննելու, հետազօտելու առարկան կազմում է թուրք տարրը։ Այս երեք գիւղը հետազօտելով, գտանք այն ինչ որ ամենագժուարին է մարդկութեան համար՝ հացի կարօտութիւնն է. բոլոր չը կորցրած երկու երեք օր ճանապարհ գնացինք այս հազորդելու ուր հարկն էր և ոչնչանից առնելով այն, ինչ հարկն է մարդու համար, դարձանք նոյն ճանապարհովը, որը փոստով, որը լարվաքարի ձիանոցով և ահա մենք կէս ճանապարհի վրա ենք այսօր—գնում ենք գէպի այն գիւղերը, ուր ժողովուրդը գիտէք թէ ինչ սրտով է մեզ սպասում։

Բայց դառնանք մեր «Մշակին» բօքաբեր հեռագրին։ Այն ասվածը, որի մէջ սկսեց խաղալ և հրմուալ զարերով քնած Հայաստանի յուսոյ բլբուլը, այն ասվածը—վասպուրական ասվածը, որի հանգստական կրծքի վրա թուխպ մթնոլորտում երեց Գաբրիէլ Տրեւտակաչեր հրեղէն սուրը ալ ձեռքին դէպի թշուառ հանգի սիրաց ուղղած և թշուառութեան հրոյ խուրձը ձախ ձեռքին, անենայ փչող հողմի զորութեամբ այս կողմն այն կողմը ցանելով—պրեց, կործանեց, տանն ու վրա արեց, հողի հետ հաւասարեց և կոտորեց, Ընկեց ահ ու սարսափի մէջ գցելով ձկող, ջղող երեխաներին և կանանցը մանրերը խնձած, աչքերը լուած, մարմինները մերկացած, որոնք լեռները, որոնք օտար երկիր, որոնք գժոխքը քշեց, խորտակեց, վասպուրականը որ դեռ ոչ մի անգամ ազատ չը տեսած, սովի անգութ հիրաները մէջն ընկաւ և այսօր արիւնաթափ, ուժաթափ մազէ կամուրջի վրա կանգնած ամեն բան լափող գազանի դէմն է կանգնած, վասպուրական ասվարէին մահն է սպառնում։

Վասպուրական ասվարէը Հայաստանի կենտրոնից, նորա վեհ և վիրաւորեալ կրծքից—գերեզմանական մահասպառ ձայնով, մարթ մեզ, մարթ ամենքի գոչելով ձեզ է ասում Հայաստանի զաւակունք՝ անգութ հայեր, իմ սիրելի զաւակունք, անսիրտ հայեր, իմ խանդակալի որդիքս, իմ զզվելի, ժանկաղէմ, իմ թշուառ, իմ մոլորեալ ժառանգներս։ Որդիքս էք դուք իմ կաթով սնուցած, թէ գազան էք դուք իմ արիւնս ծծող։

Եկեք գաւակունքս, տանէք, հեռագրով եմ կոչում եմ, եկեք, գուցէ ձեր մօրը վրա տանէք, գուցէ նորա մահուան անկողնի մէջ նորա բաղաձված վերջին արտասուաց կաթիլները սրբէք, գուցէ նորա վերջին կտակը լսէք։ Եթէ ոչ այլ ես ոչ ոք իրաւունք չունենայ իմ յիշատակս սանցնել, իրան հայ կոչելով, ոչ ոք չը համարձակի վրդովել իմ գերեզմանական խաղաղ ագարակամ բուի ձայնով «Աչխարհամեծ նայնը երգել։

Բայց ուր են ուր վասպուրականի վէրքերը դարմանողները, ուր են նորա հարազատ զաւակները։ Մեր Հայրիկը, մեր սուրբ Հայրիկը, վասպուրականի մեղմ Աբծուիկը, որի վեհ սիրոյ տատանական տարիների ի վեր բարձրանում է այն սև ասվարէի կրակված արիւնով, որը երկաթեայ իր չանգերը կամենում էր դասան ոգւոյ սիրոյ մոցնել և իր հայրական թեւերը տարածած իր թշուառ զաւակացը հովանի լինել, այսօր (լեզուս պապանձվի) թուլացած ժժոխային աղէտալի զորութեանց տակ չոքում է և մեծ և անասնանի ծանրութիւն նորա վրա ընկած նորա արծուական թեւերը կոտրատելու, խորտակելու վրա է։ Սիւն տուէք, սիրելի հայեր, օգնութիւն հասէք. հասէք Աբծուին օգնութիւն։

Ամեն մի հայ մի փոքրիկ, սկլոր արարածի, սև աչքերի, թուխ ցրված մազերի, որ այս կողմն այն կողմն ընկած, գոռում գոչում է, աչքերը լուած, թաչկանում է, վիր ընկնում և մի քանի ժամ սիրքաչով հոգի արձակում, ամեն մի հայ մէկի ձեռքից բռնած թող գուրս քաչի ազատի այդ թը չուառ արարածին այդ սրեան ծոմից, մանվան գերեզմանից—վասպուրական ասվարէից։ Ամեն մէկը այդ փոքրիկներից ձեր սիրան է, ձեր արիւնն է, ձեր յոյսն է հայեր, ինչու էք քնում, ինչու էք մեռնում։

Ինձ յանձնած այս նուիրական գործը ատարելուց յետոյ որ սկսել է մեր ողբաված ազգութիւնը, մեր վեհափառ կոմկաուու Փոխարքան—ես ինձ նուիրում եմ Հայրիկի յուսալի տեսչութեանցին, եթէ միայն հանգամանքները յայտնի են, եթէ միայն նիւթերը չը պակասին գործ անենալու, որպէս զի, հակառակ դէպքում, իմ ներկայութիւնը սովատների առաջ թէ վրա մի սովով ես չանելցեմ։ Որ ունիցի ականջս լսելոյ լսիցէ և որ հաւասս ունիցի հաւատալոյ հաւատայցէ։

Բժիշկ Բ. Նաւասարդեան

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Վ. ԱԳՈՒԼԻՍԻՑ հաղորդում են, թէ գաղտնիքի այժմեան հոգարարութիւնը բաւական թոյլ կերպով է վերարերվում իր յանձն առած պարտաքին։ Հոգարարութիւնից մէկը պ. Ն. Ն. երեկ ասաց ինչ, որ հրատարակած է տեսած, բայց կանգիգասին չեն կատարում նրա տեղը։ Ինչ